Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   2019 թվականի փետրվարի 12-14-ը՝ Բրյուսել (Բելգիա) և 2019 թվականի փետրվարի 15-16-ը՝ Դուբլին (Իռլանդիա)

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպայի աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպություն (այսուհետ՝ Եվրակոնտրոլ կազմակերպություն)՝ Բրյուսել (Բելգիա)
   և «Ռյանէյր» ավիաընկերություն՝ Դուբլին (Իռլանդիա)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հանդիպում Եվրակոնտրոլ կազմակերպության գլխավոր տնօրենի, ինչպես նաև մի շարք այլ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ՝ Հայաստանի Հանրապետության կողմից Եվրակոնտրոլ կազմակերպության մշտական հանձնաժողովի նախագահությունն ստանձնելու կապակցությամբ: Հանդիպում մշտական հանձնաժողովի քարտուղարի հետ, որի հետ քննարկվել են 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից մշտական հանձնաժողովի նախագահության շրջանակներում աշխատանքների իրականացման ընթացակարգերը:

   Հանդիպում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչներ Ֆիլիպ Կորնելիսի և Կլաուս Գեյլի հետ, որոնց հետ քննարկվել են Եվրոպական ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագիրը:

Հանդիպում «ՌյանԷյր» ավիաընկերության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են քաղաքացիական ավիացիայի և օդանավակայանների զարգացման ոլորտում Հայաստանի հետ համագործակցության հնարավորությունները:

6. **Քննարկված թեմաները.**

Բրյուսել, Բելգիա՝

Քննարկվել են Հայաստանի Հանրապետության կողմից մշտական հանձնաժողովի նախագահության շրջանակներում աշխատանքների իրականացման ընթացակարգերը:

Եվրոպական ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագիրը:

Քննարկվել է նաև Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ինքնաֆինանսավորման հնարավորությունները:

Քննարկումներ նոր ծրագրերի և համագործակցության ուղղությունների ընդլայնման վերաբերյալ:

Դուբլին, Իռլանդիա՝

Քննարկվել են քաղաքացիական ավիացիայի և օդանավակայանների զարգացման և ապագա համագործակցության հնարավորությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Բրյուսել, Բելգիա

- Հանդիպում Եվրակոնտրոլ կազմակերպության գլխավոր տնօրեն Էամոն Բրենանի հետ: Մշտական հանձնաժողովի նախագահության ընթացակարգի քննարկում: Պլանների, տեսլականների և ռազմավարության վերաբերյալ Եվրակոնտրոլ կազմակերպության հետ ապագա համագործակցությունը,
- հանդիպում Կատյա Կամարենայի հետ (Եվրակոնտրոլ կազմակերպության DG/SEC պետ և PC/CN գլխավոր քարտուղար),

- հանդիպում Մայրուղային գանձումների կենտրոնական գրասենյակի տնօրեն Ադրիան Հերբարտի հետ,
- հանդիպում Ցանցային կառավարման տնօրենի հետ: Եվրակոնտրոլ կազմակերպության մշտական հանձնաժողովի նախագահության քննարկումներ: Ապագա համագործակցություն Ցանցային կառավարման համակարգողի հետ, պլանների, տեսլականների և ռազմավարության վերաբերյալ,
- հանդիպում Իրակլի Դավիթաձեի հետ (Եվրակոնտրոլ կազմակերպության պլանավորման և կատարման բաժնի փորձագետ): Հանդիպման թեման՝ Կոմիտեի հնարավոր ապագա կարգավիճակը. ինստիտուցիոն փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բարելավում, Կոմիտեի ինքնաֆինանսավորման հնարավորության քննարկում,
- հանդիպում Դեժան Մոժսոսկիի հետ (Եվրակոնտրոլ կազմակերպություն): Նա հանդիսանում է Եվրակոնտրոլ կազմակերպության համաեվրոպական համակարգողներից մեկը: Հանդիպման թեման՝ Կոմիտեի հնարավոր ապագա կարգավիճակը, ինստիտուցիոն փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բարելավում, Կոմիտեի ինքնաֆինանսավորման հնարավորության քննարկում: Եվրակոնտրոլ կազմակերպության հետ ապագա համագործակցություն: Աջակցություն պետական քաղաքականության իրականացման հարցում և հնարավոր համագործակցության եզրեր,
- հանդիպում Մոնիկա Չորոկյանի հետ, նա հանդիսանում է Եվրակոնտրոլ կազմակերպության բիզնես և պլանավորման մենեջմենթի աջակցության մասնագետ և նրա հետ քննարկվել են նոր ծրագրերի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը,
- հանդիպում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչներ Ֆիլիպ Կորնելիսի և Կլաուս Գեյլի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի հետագա ընթացքի քայլերը:

Դուբլին, Իռլանդիա

- Հանդիպում «Ռյանէյր» բյուջետային ավիաընկերության գլխավոր գործադիր տնօրեն Պիտեր Բելյուի, Գլխավոր Կոմերցիոն տնօրեն Դավիթ Օ՛Բրայանի և Մայրուղիների զարգացման գլխավոր տնօրեն Կեյթ Շերի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության օդային տարածքի, օդանավակայանների ներուժը, ուղևորահոսքերի վերլուծությունը, ակնկալվող ուղևորահոսքի աճը,

- քննարկվել են «ՌյանԷյր» ավիաընկերության կողմից դեպի հայկական շուկա մուտք գործելու հարցը,
- հանդիպում «Ալկյոն փարթներս մարքեթս»-ի հիմնական բաժնետեր Կառլ Բլահայի հետ, ում հետ քննարկվել են ներդրումների հնարավորությունները ինչպես ավիացիայի ոլորտում, այնպես էլ այլ ոլորտներում,
- հանդիպում «Վարվիք քեփիթալի» բաժնետեր Օլիվեր Օնտիվերոսի հետ, ում հետ տեղի են ունեցել քննարկումներ հնարավոր ներդրումների վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Բրյուսել, Բելգիա

Ձեռք է բերվել պայմանավորվածություն Եվրակոնտրոլ կազմակերպության կառավարման ոլորտի առաջատար մասնագետների կողմից Հայաստան այցի վերաբերյալ: Այցի ընթացքում կուսումնասիրվեն Կոմիտեի հնարավոր ապագա կարգավիճակը. ինստիտուցիոն փոփոխություններ, ինչպես նաև Կոմիտեի ինքնաֆինանսավորման հնարավորությունները:

Նշված մասնագետների այցը հնարավորություն կընձեռնի ոլորտում առկա լավագույն փորձի ներդրմանը Հայաստանի Հանրապետությունում:

Դուբլին, Իռլանդիա

Ձեռք է բերվել պայմանավորվածություն «ՌյանԷյր» ավիաընկերությանը ներկայացնելու Հայաստանի Հանրապետության օդանավակայանների եղանակային պայմանների մասին տեղեկատվություն: Միաժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն առաջիկա համագործակցության և հարցադրումների ապահովման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բրյուսել, Բելգիա

Եվրակոնտրոլ կազմակերպությունում հանդիպումների ժամանակ ներկայացվել է SESAR կազմակերպության գործունեությունը, որը հանդիսանում է օդային երթևեկության կազմակերպման ոլորտում նոր պահանջներից բխող ուսումնասիրությունների և նոր ծրագրերի ներդրման մարմին:

Հայաստանի Հանրապետության շահագրգիռ մարմիններին (տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերություններին, գիտահետազոտական ոլորտի ներկայացուցիչներին, պետական մարմիններին) հնարավորություն է ընձեռվել ակտիվորեն մասնակցելու SESAR կազմակերպության հետագա աշխատանքներին:

Դուբլին, Իռլանդիա

«ՌյանԷյր» ավիաընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկայացված տեղեկատվությունը հնարավորինս սեղմ ժամկետում ուսումնասիրելու և հետագա համագործակցության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու վերաբերյալ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Տաթևիկ Ռևազյան

X _____

21-ը փետրվարի, 2019թ.